և զգացում, առաքինութիւն, տուն, հայր, օր, և այլն, և ասոնց նման բառերը կը հոլովէ զգացման, առաքինութեան, տան, հօր, օրուան, և այլն, այնպիսին յեռաձիսական է և մեզի հետագործ չունի. իսկ մեզ որ ռամիկ բայաստուածութիւններ կը գործածէ և յիշեալ բառերը կը հոլովէ զգացումի, առաքինութիւնի, տունի, հայրի, օրի, և այլն, անոր ըսելիք չունինք, յառաջադիմականներու խմբէն է։

Պատանին, մեկ կողմեն խմբագրին հանդգիր խօսքերեն շարժած և միւս կողմեն ապագան ձեռքի փախցնելու փախեն, կը պատասխանէ.

ՊՏՆ. — Ըստ ամենայնի համամիտ եմ, Պ. Խմբագիր, Ձեր կարծիքին, արդէն խելքն ալ ան կը սորուեցնէ. արդ պատրաստ եմ ընելու՝ ինչպէս որ կ'ուզէք։

Այն ատեն գոնորեան ժպիտ մը կը փայլի խմբագրին երեսը, կ'ելնէ և կը գրկէ զպատանին, կը կանչէ իւր ընկերները և օգնականները, և կը ներկայացնէ իրենց այս նորատուռ (prosélyte) ընկերը։ Այսպէս ամենքը միասին ձեռքերնին ամոր գլխուն վրայ դնելով կ'ըսեն միաբան. « Արժանի ես, արժանի ես մտնելու մեր գիտնական խմբին մէջ. — Dignus es, dignus es intrare in nostro docto corpore ». Եւ այսպէս կ'ատարուի պատանիին հանդէսն։ — Աչքերնիդ լոյս, ընթերցողք, լրագրական ասպարէզին վրան որ յօդուածագիր մ'ալ աւելցաւ։

Բ. Ժպիտ

ԱՊԱՀԱՐԶԱՆՆ

Բ. Շահնազար կը պարզէ մեր առջև (ի Հայրենիք, 3 Օգոստ.) Շնորհալւոյ ընդհանրական Թղթոյն « Ա. դասս քահանայից » գրածին մի կտորը.

« Մի և կնաթոզաց տրանց կամ այրաթոզաց կանանց՝ առանց կանոնական հրամանին գիցէ զք պակ. զի մի լուծիցք դուք ի քահանայական կարգէ »։

Եւ ասսի կը հետևցնէ. Ա. թէ Շնորհալին կ'ընդունի ուրեմն՝ թէ կան իրարմէ զատուած ամուսինք, որք կրնան վերստին պսակուիլ այլոց հետ, պայմանաւ որ կանոնական հրամանաւ լինի այն։ — Բ. Շնորհալին այսու կը յայտնարարէ՝ թէ զատուած ամուսնաց օտարի հետ կրկին ամուսնութեան համար կանոնիներ կան։

Եւ մեզ կ'առաջարկէ՝ յիշեալ « պարբերութեան իմաստը իրենց բացատրել, թէ ըստ քերականութեան և թէ ըստ տրամաբանութեան »։

Ա. Խօսելով Շահնազարի տուային հետևութեան մասին, մենք չենք ժխտեր, այլ մանաւանդ ըսած էինք մեր նախկին յօդուածի մէջ թէ կան « հանգամանքներ, որք ամուսնութիւնը առաջին վայրկենէն անվաւեր կ'ընեն », և հետևաբար՝ այդ հանգամանաց մէջ զուգուած ամուսինք կարող են զատուիլ և այլոց հետ ամուսնանալ։ Գործը՝ այդ հանգամանքները ուրիշ անընդունելի հանգամանքներէ զատելուն մէջ է, որ անձնական դատատանաւ և զգացմամբ չլինիր, այլ աւետարանի օրինաց ոգւոյն մէջ թափանցելով, և Ս. հաց և եկեղեցւոյ այդ ոգւոյն համաձայն գրած կանոնաց հմտութեամբ։

Այդ հանգամանքները հարցնենք նոյն ինքն Շնորհալւոյ, որոյ խօսքը Շահնազար ի մէջ կը բերէ, անուշտ ի պաշտպանութիւն Հայրենիքի ցարդ յայտնած խառնափնդոր և հիմնազուրկ գաղափարաց և սկզբանց։ Եւ առայժ՝ կը հրաւիրենք զՇահնազար, յառաջ տանել իւր ընթերցումն ընդհանրական այն լիի մէջ՝ յորում գտած է վերոյիշեալ խօսքը։

« Մի և այնոցիկ՝ որք առեւանգս սարն, զնիցէք պսակ, զի հակառակ օրինաց Աստուծոյ է։ — Մի և տղայոց անեղջայ՝ յաղագս հայրենի ժառանգութեան կամ վասն այլ ինչ պատճառի՝ պսակ դիցէ զք ի քահանայից, զի բազում մեաք լինին յայնցանէ ի պատճառս բաժանման յետոյ ի միմեանց։ Այլ ժամանակ պսակի է ի զարգանալ արութեան հասակին, ի հնգետասանին կամ հեւս առաւել՝ կնոջն, որպէս զի կարող լինիցին... հաճոյ բնակմամբ զուգիլ։ — Մի զք ի քահանայից՝ ի բռնութենէ բռնաւորոց՝ առանց կամաց տանն և կնոջն պսակ դիցէ... զի պսակն այն աճառատատ է և լուծանելի... վասն որոյ առանց խղճոյ և լուծումն այնպիսւոյ պսակին։ — Մի զք համազգեաց, որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութեան դիցէ »։

digitised by A.R.A.R.@

Ահա պակներ, որոց համար կարող չենք ըսել՝ թէ « Աստուած զուգեաց » ։ այլ մարդիկ. զոր կը լուծէ կաթողիկէ եկեղեցին այլ։ Եւ որպէս զի Աստուած զուգած լինի, վերստին կը կրկնենք, կը պահանջուին — նոյն իսկ Շնորհալւոյ խօսից համեմատ — կամք պակէոց կողմանէն, և յոյժորիւն ծանօթ կամ գուշտնի արգելից. եթէ ասոնք կան պը. սակման ժամանակ, եկեղեցին քնաւ չէ կարող լուծել զայն յեղոյ։ — Շնորհալւոյ յիշած լուծիչ հանգամանքներէն զատ կան դեռ ուրիշներ այլ։ որք մեր սոյն պատասխանի ծրագրէն դուրս լինելով, չենք ուզեր յիշել. որք սակայն միշտ այս վերջին՝ օրինաւոր ամուսնութեան համար պահանջուած երկու պայմանաց հետ կապ ունին։

Բ. Բայց այդ լուծումն և երկրորդ պակը քահանաքս պիտի չհամարձակին ինքնագլուխ կատարել՝ « առանց կանոնական հրամանին » ։ Շահնազար իւր երկրորդ դիտողութեան մէջ կանոնական հրամանը՝ կը հականայ կանոններ։ Ստոյգ խօսելով՝ մենք չկարացինք այդ խմատը յառաջ բերել յիշեալ խօսքէն, և եզականն այլ յոգնական հասկանալ։ Հետևապէս տոիպուած ենք « գրաբարի շատ հմուտ » լինելու պատիւը Շահնազարին տալ. բայց եթէ կը հաճիք մեր ևս հասկացումն իմանալ, ահա կը պարզենք հոս։

Շնորհալին այլուր, ի կարս չրջաբերականին մէջ, խօսելով նոյն խնդրոյն՝ ապահարզանի վերայ, կը գրէ անոնց հովիւ դրկած թաչտատուր եպիսկոպոսին համար. « Պահեսցէ և զհրամայեալ օրէնսն ի տեառնէ՝ որ յաղագս ատն և կնոջ անբաժանելի զուգաւորութեան, զի բայց ի բանէ պոռնկութեան և որ այլ ևս են ի կանոնս սուրբ հարցն գրեալ պատճառք, այլով իւիք մի արասցէ բայ ժինս... Զի թէ որ արձակէ զկին իւր և ապրացէ այլ՝ չնայ ըստ բանին Փրիստոսի, ապա և արձակողն՝ ընդ նմին զոր արձակեաց՝ շնութեան մեղաւոր պատժիցի » ։

Այս բանաձևին մէջ կ'իմացնէ՝ թէ եպիսկոպոսին կը վերաբերի բաժիկս տոնել՝ երբ հարկ է, և առ քահանայս գրածին մէջ՝ թէ անոնց գործն այլ է վերստին պակ դնել։ Հոս կ'ըսէ՝ թէ եպիսկոպոսն ապօրինի ամուսնութիւն մի լուծելու ժամանակ պահեսցէ զհրամայեալ օրէնսն, և հոն՝ թէ քահանայն չպտակէ առանց կանոնական հրամանին։ Զբսեր՝ հակառակ կանոնական հրամանին, որով թերևս հասկացուէր՝ կանոնի դէմ որ կայ գրուած հասարակաց առՀև. այլ առանց, որով կ'իմացնէ մի նոր հրամանի սպառել։ Եւ է այդ ըստ մեզ՝ այն հրամանն, զոր պիտի տայ եպիսկոպոսն ըստ կանոնաց, (այսինքն՝ որպէս կը սահմանեն կանոնք՝ որ եպիսկոպոսն լուծէ առաջինը և կրկին պակման հրաման հանէ, — այդ է կանոնականն), յետ քննելու ապահարզան խնդրողաց իրաւացի պատճառները. կամ մերժէ՝ ուր չկան օրինաւոր պատճառք։

Գ. Առանց կանոնական հրամանին թէպէտ կանոններ չհակացուի, բայց վերջապէս կային կանոններ որք այլ և այլ պատճառաց համար թոյլ կու տային ապահարզանը, որպէս տեսանք վերը՝ առաջին պատասխանւոյն մէջ։ Շնորհալին ահա այս երկրորդ հատուածին մէջ այլ յայտնապէս կը յիշէ « ի կանոնս Ս. հարցն » ։ Ս. հարց անունը կրող կանոնաց մէջ կային հարազատք և նորամուտք, — որպէս տեսանք փոքր ի շատէ մեր նախկին յօդուածի մէջ (Բգմ. Օգոս. յէջ 370, և ծն. 3), և յարմար առթիւ պիտի չդանդաղիք աւելի ևս պարզել և հաստատել նոյն դիտողութիւնքը։ — Շնորհալին արդեօք այն ամենուն խառն ի խուռն հաւատացեր է, որ և է ակնարկութիւն չենք գտներ իւր թղթոց մէջ. այլ մանաւանդ կը տեսնենք՝ որ ընտրաբար ի մէջ բերած է վերոյիշեալ չորս լուծիչ պայմանները, որ նշան մ'է ամենուն չհաւատալուն։

Սակայն կը տեսնենք՝ որ յիշեալ երկրորդ հատուածին մէջ ամուսնական անհաւատարմութիւնն այլ լուծիչ պայմաններէն մին կը կարծէ։ Մենք կը համարինք՝ թէ աւելորդանչի խօսքին արտաքին երևութէն, կամ մանաւանդ Ս. հարց անուամբ տեսուած կեղծ մեկնութենէ կամ կանոնէ մի խարուած է Ս. հայրապետն։ Բայց երբ կը նկատենք՝ որ Շնորհալին յայտմ մասին մեր ուշը և ակնարկը իւր հեղինակութեան և իրեն հպատակելու վերայ չի հաւաներեր, այլ Ս. գրոց և Ս. հարց, և այսու գինքն այլ անոնց հպատակ կը յայտարարէ, — երբ կ'անցնինք կը նկատենք Պաւղոս առաքելոյն խօսքը, որ այդ պայմանի մէջ ամուսնաց զատուելու թոյլ կու տայ աւետարանչին հետ, բայց անայր կամ անկին մնալ, և կամ « անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի » կ'ըսէ, — երբ կը նկատենք՝ որ Ս. հարց կանոնք ևս, այսինքն անոնց վաւերական և ողջամիտ կանոնք՝ անհաւատարմութեան համար կրկնամուսնութիւն թոյլ չեն տար, — մենք այնուհետև զմեզ ազատ կը համարինք, այլ մանաւանդ պարտաւոր՝ չհետևելու Ս. հայրապետին անգիտութեամբ կատարած այդ թոյլատուութեան, եթէ նոյն իսկ իւր գրչէն ելած լինի այդ կէտ, և ոչ օտարի յաւելուած։

digitised by A.R.A.R.@

*
* *

Ա. Արփիարեանի երկու յօդուածոց մէջ չգտանք մի տող՝ որ մեզմէ պատասխանի սպասէր, բաց ի Թերևս մի խօսքէն՝ որուն կը պատասխանենք — ինչպէս ցարդ և ուրիշ յօդուածոց — ոչ թէ Հայրենիքին պատասխանելու համար, այլ անոր ընթերցողաց մտքերն ուղղելու։ Արփիար կը գրէ. « Այն ամուսնական վէճերը, որոնց համար դուք կ՚ըսէք թէ « Եւ սակայն որչափ այդպիսի և աւելի տարօրինակ գործեր կատարած է և կը կատարէ Էլմիածին », հակաքրիստոնէական չեն. եթէ ոչ ամէն խելահաս հայ, աշխարհական թէ եկեղեցական՝ անոնց դէմ կը բողոքէր »։

Զենք զարմանար այդպիսի բողոքաց դոյութեան անտեղեակ լինելդ կամ ուրանալդ վերայ. բայց կը հարցնենք. մի թէ ծանր բողոք չէ Թրքահպատակ հայոց պատրիարքաց այդ խնդրոյն մէջ մայր աթոռոյն հակառակ բռնած գովելի ընթացքը։ Եւ ամենածանր և յայտնի բողոք չէ՞ նոյն իսկ այդ աթոռոյն վերայ բազմող կաթողիկոսաց ոմանց՝ իրենց նախորդաց դէմ վեհանձնաբար հակառակ դրօշ պարզելն, գուցելով սակի՞ որ և է լուծման համար՝ թէ « Հայաստանեայցս եկեղեցւոյ վարդապետութեան և բնութեան հնամրիտ օրինք իրաւամբ է խափանեալ »։ (կարդա Գէորգայ չորրորդի կոնդակը)։ Ձեր ականջը չհասա՞։ Կ. պոլսի մէջ հրատարակուած « Եկեղեցի Հայաստանեայց » անուն հանդիսի ձայնը 1888ի 5 թուոյն մէջ՝ « Աւետարանի վարդապետութիւնը ամուսնալուծութեան վերայ » վերնագրով. մի յօդուած՝ քան զոր Թերևս լաւ պիտի չգրէր մի կաթողիկեայ բարոյագէտ։ Զլսեցիք Նոր դարի 1891 տարւոյ տասնևոր թուոց մէջ Արամեան բժշկի կորովի և ողջ ձայնը, — որում կրնան նախնէլ շատ եկեղեցականներ, նոյն իսկ բարձրատիճանք, — և նոյն ձայնի զանազան արձագանգները, և այլն։

Կարծենք՝ թէ բողոքը միայն դէմ ընդդէմ աղաղակելով չլինիր։ Սակայն անշուշտ այդ ամէն բողոքարկուք ըստ ձեզ անհիմնահաս հայեր էին և են, որովհետև Արփիարեան չեն, և իրենց ձայներն հին քարոզներ, որովհետև Հայրենիքի ձայներ չեն։ Ո՞ն անդր յասմն, քայլերդ. ընդարձակ է ձեր ասպարէզ. մի բնաւ խնայէք նոյն իսկ շօշափելի ճշմարտութեանց նկատմամբ չհայլելէ... սխալներ, « որոնք կը կարծէք՝ թէ կարդացող ժողովրդին համար հանգիշ կ՚երևին »։ Կարծելն աւելորդ է. ապահով գիտցէք՝ թէ կարդացողք անոնց համոզուած են այնչափ՝ որչափ գրողք...

*
* *

Ե. Օտեան այլ, որ կը լսենք՝ թէ Կ. պոլսի մէջ ակներև գիտնականի համբաւ կը վայելէ, գրած էր երկայն յօդուած մի՝ իւր համբաւոյն յարմար լեզուով... յիշողներով, որք փաստերն էին իւր ըրած զոյգ մի խրթին և ճարտարագիտ դիտողութեանց՝ զորս մանկունք արդէն շատ անգամ լուծեր են իրենց լեզուի կապին հետ։

Աշխարհափորձ գիտնականը իւր մեծ ճարտարութիւնը ցոյց է տուեր, փոխանակ ուղղակի և միայն յօդուածագրիս պատասխանելու, Մխիթարեան միաբանութիւնը յիշոցանոցելու մէջ։ Գեղեցիկ գիւտ։

Մենք որ յատուկ վարժարան չենք մտած և սովորած՝ փաստից անարգանք կամ թշնամանաց թշնամանք փոխանակել, կը խոստովանինք մեր միամտութիւնը և ոգիտութիւնը՝ համբաւաւոր գիտնականին հետ իւր լեզուով չափուելու մէջ, և կը լռենք։

Հացունի

digitised by A.R.A.R.@